# ՍՈՂՈՄՈՆ ՄԿՐՏՉԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Ծնվել է 1893թ., Գորիսի շրջանի Խոտ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի, ապա Շինուհայրի ծխական դպրոցում: 1909թ. մեկնել է Բաքու աշխատելու: Ծառայել է ցարական բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է Տաթև գյուղի հեղկոմի նախագահ, ապա՝ Հայաստանի արտակարգ հանձնաժողովի կոմիսար և լիազոր (1920-1923), Գորիսի և Ղափանի շրջխորհուրդների գործկոմի նախագահ (1924-1927), ղեկավարել Զանգեզուրի գավխորհրդի գործկոմը (1927-1929): Եղել է Հայաստանի ջրային տնտեսության պետի տեղակալ (1929-1931), Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) և Ախտայի (այժմ՝ Հրազդան) շրջխորհուրդների գործկոմի նախագահ, <<Կիրշինի>> պետ (1937-1938), Հայկոոպի նախագահ (1938):

1938թ. դեկտեմբերից մինչև 1940թ. հունվարը եղել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: Հետագայում աշխատել է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր վերաբնակեցման վարչության պետ:

1950-1961թթ. եղել է Նախարարների խորհրդին առընթեր պետարբիտրաժի գլխավոր արբիտրը:

Մահացել է 1963 թվականին: